(ՌՂԹ = 1650)

Շաբաթի աւուր Յունվարի Ե ելեալ ամենայն ուխտաւորքս առ ի նաւակատիս և ի տօն ամէնաւրհնեալ Ծննդեանն(*) եւ կատարեալ զուխտն Կիրակի (6 Յունուար) ի հասարակել աւուրն ելեալ եկաք ի տեղիս մեր։

Յայտնութեան պահոց առաջի օրն էր, որ ցամաքաւ ուխտաւորքն եկին յամենայն գաւառաց և յաշխարհաց, ընդ որս էաք ի տօն սուրբ ուխտի Ծննդեանն։ Յետ աւուրց և ապա յԱնապատ գնացաք, ուր Յովաննէս մկրտիչն Քրիստոսի աղօթէր անտես ի մարդկանէ, և շրջեալ ընդ վայրսն ամենայն՝ եկաք ի ջուրն Փիլիպպոսի առաքելոյ, ուր մկրտեաց զներքինին Հոգւով Սրբով։ Եւ այլ բազում տեղիս տնօրինականաց, որ ի գիր ոչ անկանի, այլ զմեծամեծսն գրեցի առ յոչ մոռանալն իմ զսոսայ և խրախճանալ այսու ի կենդանութիւն ունայնութեան մերում։ Եւ ի ճանապարհին Սուրբ Ծննդենի կայր ծառ մի ուր հանգեալ էր Սուրբ Աստուածածինն անդ, յորժամ զՅիսուս բերէր քառասնօրեայ ի Տաճարն, և ծառն խոնարհեալ ճիւղով, տերևով և պտղով և ոստով, որպէս թէ յերկրպագութիւն տիրածին Մօրն և կուսածին Մանկանն. և ուխտաւորք կտրեալ ի ճիւղից և յոստոց նորա խաչ ձևացուցեալ՝ ընծայս տանէին յաշխարհս իւրեանց։ Արապ ոմն յետ Բ ամաց՝ նախանձեալ ընդ այն, այրեաց զայն ի հիմանէ և յարմատոց. յետ ամսոյ միոյ կին և որդիք նորա և ազգայինք ընդ նմա պատուհասիւք սատակին ի սակաւ աւուրս և տունք նոցին

(*) Լուս. եւ եկեալ առ մեզ սարկաւագ մի ի նոցանէ եբաց ժամատուն մի մեզ։